

ՆԿԱՐՆԵՐԸ՝ ԹՐԵՅՍԻ ԲԻՇՈՊԻ

«Սերն առաջանում է մարդկանց ներելու շնորհիվ»:

Բայց Ջուլիան վստահեց միսիոներներին: «Այս մարդիկ ուրիշ են»,- ասաց Ջուլիան: «Նրանք խաղաղություն են քարոզում»:

Երբ միսիոներները եկան, Ջուլիան նրանց ներս հրավիրեց: Նրանցից մեկը նկատեց սփռոցի վրա դրված լուսանկարը: Դա Ջուլիայի հարսանիքի նկարներից էր:

«Ո՞վ է նա»,- հարցրեց միսիոները՝ մատնանշելով լուսանկարը:

«Ամուսինս՝ Ջոնը»: Ջուլիան խոնարհեց հայացքը: «Նա մահացել է ավտովթարից»:

Միսիոները գլխով արեց: «Մենք հավատում ենք, որ ընտանիքները կարող են հավերժ միասին լինել, նույնիսկ մահանալուց հետո»:

Խաղաղության զգացումը ողողեց Ջուլիային: Նա իրեն երջանիկ զգաց, երբ իմացավ Աստծո ծրագրի մասին և շարունակեց հանդիպել միսիոներների հետ: Ավետարանի հանդեպ սերն աճեց Ջուլիայի սրտում, ճիշտ այնպես, ինչպես նրա պարտեզի բույսերը: Շուտով նա որոշեց մկրտվել:

Եկեղեցում Ջուլիան հանդիպեց շատ նոր մարդկանց: Ոմանք սևամորթ էին: Ոմանք՝ սպիտակամորթ: Բայց նրանք բոլորը միասին էին ծառայում և սովորում:

Ջուլիան եկեղեցու երեխաներին ցույց տվեց, թե ինչպես օգնել իր պարտեզի աշխատանքներում: Նա ասաց. «Մենք սրտերը պետք է փափուկ լինեն, ինչպես այս հողը: Մենք պետք է տեղ գտնենք ավետարանի համար մեր մեջ: Մենք պետք է տեղ պատրաստենք սիրո համար»: ●